

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՀՈՒՄԱՆԻՍՏՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Ա. Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Աշխատավոր մարդիկ մշտապես երազել են խաղաղ ու հաշտ կյանքի մասին: Նրանց խաղաղասիրական տրամադրություններն ու զգացումները այս կամ այն չափով արտացոլվել են ժողովրդական բանահյուսությունից մեջ, ինչպես նաև անհատական ատեղծագործություններում:

Ամենահնագույն էպիկական գործերից մեկում՝ «Իլիականում» պատերազմների նկատմամբ հասարակ մարդկանց ատելությունից արձագանքներն են առկա: Հատկանշական է, որ Հոմերոսը, բացառությամբ պատերազմի աստված Արեսից, գովերգում է աստվածների «արձանիքները»: Նա բանադրում է Արեսին, որակելով նրան՝ ժողովրդասպան, արյունարբու, ամուսնասպան, մոլեգնած, անսանձ: Աստվածաճայր Զևսը Արեսին անվանում է երկնքում բնակվող աստվածներից ամենատեխին, որին հաճելի են համատարած կռիվ ու սպանություն:

Պատերազմի դեմ է հնչում զինվոր Թրեսիդեսի ակտիվ բողոքը: Նա Ագամեմնոսին ամբաստանում է այն բանի համար, որ նա շահատենչ, եսամոլական նկրտումներից դրդված՝ չի ցանկանում տուն վերադարձնել զորքը: Էպոսում պատերազմի նկատմամբ մասսաների դայրությունը չուրօրինակ է.

Ի՞նչ ես ուզում, ո՞վ Աթրիդես, արդյոք ինչի՞ց ես դու դժգոհ:  
Վրաններդ են պղնձով լի, սենյակիդ մեջ կան ընտիր,  
Զքնաղ կանայք, որ ամենից առաջ բեզ ենք պարգև բերում  
Մենք, զորքերս արգիվական, երբ քաղաքներ ենք նվաճում:

Գուցե բեզ նո՞ր ոսկի է պետք, որն հնազանդ շնորհներ բեզ  
Տրոյադացի որևէ քաջ՝ իբրև փրկանք իր զավակի,  
Որին կապած քարջ տալի ես և կամ մի այլ արգիվացի:  
Կամ գուցե բեզ նո՞ր կին է պետք, որ նրա հետ, երբ ցանկանաս,  
Տուփանք անես և բեզ պահես իբրև մոլի մի կնամուղ:  
Անվայել է բեզ, իշխողիդ, փորձանքի տալ արայացոց<sup>1</sup>:

Պատերազմը ներկայացվում է որպես անսիրտ դահճ, որի համար միևնույն է, թե ում գլուխը կկտրի: Էպոսի սկզբում Հոմերոսը դրվատում է Աթիլեսի ցասումը, որը ակնուհետև զիջում է խաղաղասիրությունը: «Ողբսականի» վերջին երգերը կոչ են անում մոռանալ եղբայրասպան պատերազմը և հաս-

նել համընդհանուր խաղաղության: Իմաստության աստվածուհի Ափինյան իր միջամտությամբ կանխում է նոր արյունահեղությունը, պահանջելով մտածանալ բոլոր տարածաչնությունները և վրեժխնդրության զգացումը: Նախկին սերը պետք է միավորի երկու կողմերին:

Ուշագրավ է այն փաստը, որ հին հույները իրենց բոլոր աստվածների պատվին տաճարներ և զոհարաններ են կառուցել, բացի պատերազմի աստված Արեսից:

Հերոդոտը (մ. թ. ա. V դ.) նկարագրելով հույն-պարսկական պատերազմները, նկատում էր, որ խելահաս մարդը պատերազմը երբեք չի գերազանց խաղաղությունից, բանզի խաղաղության ժամանակ երևաաներն են թաղում ծնողներին, պատերազմի ժամանակ՝ ծնողները երեսաներին:

Խաղաղության գաղափարը պարզորոշ արտացոլված է էսքիլեսի, Սոփոկլեսի, էվրիպիդեսի ստեղծագործություններում: Ուշագրավ է էսքիլեսի կոչը աստվածներին՝ «Թող մեզանից հեռու մնա արյունոտ կոխը, թող շնուի բաղաբացիների արյունը, թող շարժանա վրիժառության ծարավը»: էվրիպիդեսը «Տրոյացի կանայք» ողբերգության մեջ պատերազմի առաջացրած տառապանքների ցնցող տեսարաններն է պատկերում: Կործանարար պատերազմ հրահրողների դեմ ուղղված լուտանք և խաղաղության գրվատանք կա Սոփոկլեսի «Անտիգոնեում»:

Հակապատերազմական հստակ դիրքորոշում ունի Արիստոֆանը: Շատ կատակերգություններում նա խաղաղության կրքոտ ջատագով է: «Աբաչացիները» կատակերգության հերոս Դիկեոպոլիսը գալիս է ժողովրդական ժողով և հայտարարում, որ ինքը եկել է ծանակելու պատերազմի կողմնակիցներին: Արիստոֆանը մեծ հումորով ծաղրում է Աթենքի ու Սպարտայի միջև հաշտության հակառակորդներին: Նա նկարագրում է, թե ինչպես Դիկեոպոլիսը չի ապավինում տերերի ողջամտությանը, այլ ինքն է ձեռք բերում անձնական խաղաղություն՝ նվաճելով խելամիտ ու շրջահայաց մարդու համբավ: Դրանով Արիստոֆանը գտնում է, որ խաղաղությունը հատուկ է բանականությունը, բխում է մարդու էությունից:

«Խաղաղություն» կատակերգության հերոս Թրիգլեսը դաշնակիցների օգնությամբ հայտնաբերում է խաղաղության աստվածուհուն և խաղաղ ստեղծագործական աշխատանքի կոչով դիմում է գյուղացիներին: Ինչպիսի երջանկություն է, որ սաղավարտներն ու սրերը այլևս մեր գլուխը չեն տանում, բահն է փալցում արևի տակ, — ուրախանում է Թրիգլեսը: Կատակերգությունն ավարտվում է առ աստված ուղղված խաղաղության հայցով:

Ի տարբերություն Հոմերոսի, որը առավելապես պատկերել է պատերազմի սարսափները, Արիստոֆանը նշավակում է պատերազմը, ծիծաղում դրա անհեթեթության, միմյանց բնաջնջող մարդկանց խելահեղության վրա: Խաղաղություն տենչացող հումանիստ բանաստեղծի համար բանականությունն ու պատերազմը անհամատեղելի են: -

Արիստոֆանն իր հակապատերազմական հայացքներն արտահայտում է խալսթո ծաղրանքով, խարազանելով մարդկային արյունահեղություններ տենչացողներին: Դա, ըստ էության, պատերազմը դատապարտելու գեղագիտական եղանակ է:

Պատերազմի խիստ քննադատություն կա հնագույն գրական հուշարձաններում: Շատ ժողովուրդների առասպելներ գրվատում են խաղաղ ժամանակ-

ները: Հնդիկների «Ռիզվեդալում» և «Բ՛հագավադհիտեում» բողոք է հնչում պատերազմի դեմ:

Ժողովրդական հույզերի ու տրամադրությունների արտացոլումն է բանաստեղծությունների հին շինական ժողովածուն՝ «Շի-կինգը»: Դրանցից մեկում առկա է հետևյալ զինվորական երգը. «Ճզմում է մեզ արքան, բարձրանալով մեր դիակների վրայով, ինչպես աստիճանների: Ո՞վ կարող է հաշվել, ինչքան ջուր է հոսել դետի մեջ, ո՞վ կարող է հաշվել, ինչքան անտեղի արյուն ենք մենք թափել»: Վերգիլիոսը նման միտք է հայտնում «Էնեիդայում».

«Երբ արքաները կովում են, ժողովուրդներն են դրանից տառապում»: Ռուսական առածն ասում է. «Տերերը կովում են, ձորտերի քանրուն է ճրթճրթում»:

Հումանիզմի, արդարության և աշխատասիրության ոգով է տոգորված հայկական հերոսական «Սասունցի Դավիթ» էպոսը, որի հերոսները մեծ սխրագործություններ են կատարում օտարի լծից ժողովրդի ազատագրության համար: Նրանք անխղճիտորեն կապված են ժողովրդի հետ: Դավիթը ատելություն է ցցված դեպի պատերազմը: Նա զենք է վերցնում միայն այն դեպքում, երբ հարկավոր է հայրենիքը պաշտպանել օտարերկրյա կեղեքիչներից, խորտակել շարը: Կովի ամենաթեթ պահերին անգամ Դավիթը պահպանում է հոգու խոհեմությունն ու մաքրությունը: Հատկանշական է հետևյալը. Մարա-Մելիքի ավազակախմբերը ներխուժում են Սասուն՝ այն ավերելու ու նվաճելու նպատակով: Դավիթը փակում է նրանց ճանապարհը, ոչնչացնում թըշնամուն: Մարա-Մելիքի բանակի արաբ զինվորքը, արտահայտելով հասարակ զինվորների տրամադրությունները, դիմում է Դավթին.

— Դավիթ, — ասաց, — մեռնե՛մ քո արևուն.

Ձէ՞ որ էնոնք էլ մա՛րդ են, իսա՛ն են.

Ինչի՞ կը կտորես, ինչի՞ կը սպանես.

Ձէ՞ էզոնք է՛լ երեսանե՛ր ունեն.

Տո՛ւն ու կընի՛կ ունեն:

Էնոնց սպանես՝ ճժերու մեղք կը՛նկնի քո վիզ:

Աղբատ ու խեղճ մարդ են էզոնք:

Որը իր մոր մեկուճարն է,

Որը նոր սրակված տըղա,

Որը իր օջախի տունն է,

Որը հանգած մի տան ճրագ:

Պատասխանեց. —

Մեզ ի՞նչ մեղք կա.

Մըսրա Մելի՛քն է զոռովեն բռնե բերե.

Մըսրա Մելի՛քն է քո դուշման,

Դընա իր հետ կռիվ արա՞:

Դավիթն ունկնդրում է զինվորի ողջախոհ կողը.

... Հա՛լվոր,

Աղե՛կ խոսք ասացիր.

Ես քո ասած տ՛անեմ՞:

2 «Սասունցի Դավիթ», Երևան, 1961, էջ 235—236:

3 Նույն տեղում, էջ 236:

Դավիթը պատժում է մեղավորին՝ Մսրա-Մելիթին և ազատ արձակում նրա զորքը, պատվիրելով.

Ուր տեղեն էկեր եք՝ էլեք, գնացեր ձեր տեղ:  
 էլեք, գնացեր ու ձեր տներ նստեր,  
 Դուք ինձ համար աղոթք արեք,  
 Իմ հորն ու մորն էլ օղորմի՛ տվեք.  
 Հանդա՛րտ կացեք,  
 Մեկ էլ չ'էլենք ու գաք վեր Սասնա:  
 Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,  
 Թե որ դուք կավի գաք վեր մեզ՝  
 Քառասուն գաղ խոր հորում ըլնեք,  
 Թե ջաղացի ջոջ բարի տակ,  
 Տ'էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,  
 Տ'էլնի ձեր դեմ Թուր կեծակին՝:

Ուշագրավ է էպոսի վերջը. Սասունցի Դավիթ որդին՝ Մհերը, պատրաստ է նոր մեծագործությունների: Բայց ժողովուրդը ապաղայի համար պատասպարում է նրան ժայռախորքում: Մհերը խոստանում է լույս աշխարհ գալ այն ժամանակ, երբ «աշխարք ավերվի, մեկ էլ շինվի, երբ որ ցորեն կլավ, քանց մասուր մի, գարին կլավ քանց ընկուղ մի», այլ կերպ՝ «երբ սրերից մանդաղ կպատրաստեն, իսկ նիղակներից դանակներ՝ խաղողի սրվերի համար»:

Պատերազմի նկատմամբ բացասական վերաբերմունք կա նաև հին ռուսական ժողովրդական բանահյուսության մեջ: «Ասք Իզդրի ճակատամարտի մասին» ստեղծագործությունում ընդգծված է երկրի միասնության, անջատվողական անհաշտությունների վերացման անհրաժեշտությունը, հայրենիքի պաշտպանության ու խաղաղության հաստատման կարևորությունը: Հեղինակը նախատում է իշխան Իզդրին արշավանք ձեռնարկելու համար: Յասունով են նկարագրված երկպառակողական բախումները և պոլովցիների ասպատակությունները, որոնց հետևանքով «Այնժամ Ռուսիայում սակավ էր լավում ձայնը հողագործի, բայց հաճախ էին կոտոմ ազոավները՝ բաժանելով մեջ-մեջ դիրքը մարդկանց»:

Ասքում կան պատերազմի հետևանքները բացահայտող պատկերավոր նկարագրություններ. «Եվ անդ սևահողը սմբակների ներքո ցանվեց ոսկերքով, ոտոզվեց արյամբ, և ապա աճեց աղետոն ահավոր համայն Ռուսիայում», կամ՝ «Տխրությունից խշշաց ասփաստանի խոտը, ծառերը կոսցան վշտի ծանրությունից»<sup>5</sup>:

Հակապատերազմական ոգով են համակված ռուսական հինավուրց բիլինաները, ասքերը, երգերը: Դրանց մեջ փառաբանվում են հասարակ աշխատավորները՝ Իլյա Մուրոմեցը, Միկուլա Սեկյանինովիչը և ուրիշներ, որոնց արարքները, ձգտումները լիովին ներդաշնակ են ժողովրդի ակնկալություններին:

Բուրժուազիայի պայքարի հակաֆեոդալական բովանդակությունը իր հա-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 247:

<sup>5</sup> «Ասք Իզդրի ճակատամարտի մասին», Երևան, 1948, էջ 72—73:

մատաստասիան արձագանքը գտավ նրա գաղափարախոսության մեջ, որի մասնավոր արտահայտությունը հակապատերազմական խորհրդածություններն ու ծրագրերն էին: Խաղաղասիրական դատողություններով ու նախագծերով հանդես եկան հումանիտաներ էրազմ Ռոտերդամցին, Սեբաստյան Ֆրանկը, Յան Ամոս Կոմենսկին, Վիլյամ Պենը, Սեն-Պյեռը, Ժան-Ֆակ Ռուսոն, Էմանուիլ Կանտը, Իոհան Գոտֆրիդ Հերդերը, Իոհան Գոտլիբ Ֆիխտեն, ռուս լուսավորիչներ Ա. Ն. Ռադիշչևը, Վ. Ֆ. Մալինովսկին, ուսուղիստ-սոցիալիստներ Սեն-Սիմոնը, Ռոբերտ Օուենը և ուրիշներ:

Հումանիստ մտածողները վճռականորեն դատապարտում էին պատերազմական նկրտումները, զինված բախումները: «Խաղաղության գանգատը» երկում էրազմ Ռոտերդամցին գրում էր. «պատերազմը բոլոր դժբախտությունների ու շարիքների սկզբնատարածանն է, առանց տարբերության ամեն ինչ լափող անտույզ օվկիանոս է»<sup>6</sup>: Ֆրանկը պատերազմը որակում էր որպես մարդկանց էությանը հակասող գործողություն: Ռադիշչևը ցասումով էր դատափետում զավթողական պատերազմները. «Ձեզ մի արդարացրեք մարդկության բռնադատողներ, շարագործներ, թե այս մարասփելի շղթաները հնազանդություն պահանջող կարգ ու կանոն են»,— գրում էր նա:

Նալբանդյանը պատերազմը բնութագրում էր իբրև մարդկային բանականությանը հակասող երևույթ: Նա գրում էր. «Խորհրդածության դասլիճները առավել լավ ասպարեզ են մարդկային բանականության համար, քան թե արյունոտ դաշտերը»<sup>7</sup>:

Կանտի պատկերավոր արտահայտությամբ՝ պատերազմը կհասցնի հավիտենական խաղաղության սոսկ մարդկության համընդհանուր գերեզմանատանը: Վ. Ֆ. Մալինովսկին նշում էր. «... Չարիքի երկարատևությունը չի ապացուցում դրա անհրաժեշտությունը»<sup>8</sup>:

Կոմենսկին, Ռուսոն, Ռադիշչևը, Նալբանդյանը և ուրիշներ խաղաղության հնարավորությունը գնահատում էին սոցիալական վերափոխությունների տեսանկյունից: Ռադիշչևը գտնում էր, որ միայն հասարակության արմատական վերակառուցումը ժողովուրդներին ղերծ կպահի պատերազմներից ու բռնությունից: Ըստ Նալբանդյանի՝ բանի դեռ սոցիալական անհավասարությունը գոյություն ունի, բռնությունը կիշխի հասարակության մեջ:

Ամբողջությամբ վերցրած, մինչմարքսիստական հումանիստների խաղաղասիրական իմաստախոսություններն ու նախագծերը իրենց վերացականության պատճառով գործնականում արգասավոր չէին: Ֆ. Էնգելսը նկատում էր, որ ոչ հասուն անտեսական հարաբերություններին համապատասխանում էին ոչ հասուն տեսություններ:

Քաղաքական իշխանություն նվաճած բուրժուազիան սահմանադատվեց անցյալի հումանիստական ավանդույթներից: Ամեն զեռով շահույթ կորզելու նկրտումը նրա գործունեության անկյունաքարն է:

Իմպերիալիզմի գաղափարախոսները ջատագովում են բռնության ու ռազմամոլության պաշտամունքը: Իմպերիալիզմը հումանիզմի թշնամին է:

6 Эразм Роттердамский, Жалоба мира («Трактаты о вечном мире»), М., 1963, էջ 40:

7 А. Н. Радищев, Избр. филос. и обществ. полнт. произв., М., 1952, էջ 140:

8 Մ. Նալբանդյան, Երկրի լիպատար ժողովածու, Երևան, 1947, հ. 2, էջ 256:

9 «Трактаты о вечном мире», էջ 215:

Մարդկության լավագույն իդեալներն ու մարդասիրական ավանդույթները մարմնավորված են կամունիստական աշխարհայացքի մեջ: Սոցիալիստական հումանիզմի հիմնատարրերից մեկը նրա ինտերնացիոնալ բնույթն է, վճռական պայքարը հանուն ժողովուրդների բարեկամության, հարատև ու կայուն խաղաղության հաստատման: Կ. Մարքսը և Ֆ. էնգելսը ընդգծում էին, որ խաղաղությունը այն հասարակության միջազգային սկզբունքն է, ուր միակ տիրակալը աշխատանքն է: Խաղաղությունը սոցիալիստական ժողովրդագիտությունների արտաբերյալ բաղաբական գործունեության հիմնական բաղադրամասերից մեկն է, գործունեություն, որի մեջ զբաղեցվում է սոցիալիզմի հումանիստական էությունը: «...Մեր ամբողջ բաղաբականությունն ու պրոպագանդան,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ուղղված է ամենևին ոչ թե այն բանին, որպեսզի ներբաշենք ժողովուրդներին պատերազմի մեջ, այլ որպեսզի վերջ տանք պատերազմին»<sup>10</sup>:

Սոցիալիստական հումանիզմը մարտնչող է, որ նշանակում է վճռական և հետևողական պայքար ընդդեմ պատերազմածին ուժերի, հանուն միջազգային տարաձայնությունների ու վիճելի հարցերի խաղաղ կարգավորման՝ հակադիր հասարակարգ ունեցող պատությունների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքի հիման վրա:

## ТЕМА МИРА В ПРОИЗВЕДЕНИЯХ ГУМАНИСТОВ

С. А. КОЧАРЯН

Доктор философских наук

### Резюме

Носителями миролюбивых гуманистических побуждений являются трудящиеся массы. Их антивоенные настроения и чувства нашли отражение в народном фольклоре, а также в творчестве многих мыслителей.

Однако в целом все миротворческие проекты и концепции домарксистских гуманистов оказались практически негодными в силу их абстрактно-утопического характера. Несмотря на ряд гениальных догадок, они остались на позициях идеалистической трактовки социальных явлений. Незрелым общественно-экономическим отношениям соответствовали незрелые идеи. По словам Энгельса, решение общественных задач приходилось выдумывать из головы. Историческая практика разведала иллюзии гуманистов. Пришедший на смену феодализму капитализм обострил социальные антагонизмы.

Идеологи монополистической буржуазии апологируют культ насилия и милитаризм. Имперализм—враг гуманизма. Он направляет завоевания человеческого разума против человечества.

Лучшие идеалы и гуманистические традиции воплощены в коммунистическом мировоззрении. Одной из составных частей социалистического гуманизма является его интернационалистический характер, решительная борьба за прочный мир на земле.

<sup>10</sup> В. И. Ленин, Полн. собр., соч., т. 42, էջ 99: